Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

Հրատարակութիւն Սարգիս Փանեանցի

5985

Ց. ԲԵՐԲԵԽԱՆԵԱՆ.

„ԶԻՐՎԱՆԻ ԽԱՆԸ“

(պատմական զրոյց)

БИБЛИОТЕКА
ИНСТИТУТА
ВОСТОКОВЕДЕНИЯ
Академии Наук
СССР

Տպարան Ն. Երեւանցեանի

ԲԱԳՈՒ.
1904.

891.99
Բ-12

Ֆոնդ
985
Հրատարակություն Սարգիս Փանոսեանցի
01 JAN 2009
06 DEC 2004
891.99
Բ-17

Ց. ԲԵՐԲԵՐՅԱՆ.

,,ՀԻՐԱՎԱՆԻ ԽԱՆԴ"

(պատմական վրոյց)

БИБЛИОТЕКА
ИНСТИТУТА
ВОСТОКОВЕДЕНИЯ
Академии Наук
СССР

Տպարան Ն. Երևանցեանի
ԲԱԿՈՒ.
1904

22 FEB 2013
22640

Дозволено Цензурою 4 Сентября 1903 г. Тифлисъ.

ՊԵՏ. ԿԱՌ. ԳՐԱԴԱՐԱՆ
ГСС Библиотека
ՀՍՍՌ-Арм ССР
60970-67

Ա.

ԶԻՐՎԱՆԻ ԽԱՆԸ.

(պատմական զրոյց)։

1795 թուին զարնանային մի գեղեցիկ երեկոյեան, Զիրվանի Մուստաֆայ-խանը, զգեստաւորուած նստած էր իւր շքեղաշուք ապարանքի սրահում։

Խորասանի թանգագին թասքէչը ծեռքին խաղացնելով, նա ինքնաբաւական դէմքով հրճուումէր իւր առաջ բացուած դալարուն բոյսերով ծաղկած պարտէզը դիտելով։

Այդ պահուն, նրա բազմաթիւ ծառաներից մինը մօտեցաւ խանին և ասաց։

— Մեծափառ խան, քաղաքի հայ քահանաներից մինը կամենում է Ներկայանալ Ձերդ մեծութեանը։

Հրաւիրեցէք ներս, պատասխանեց խանը մի առանձին բաւականութեամբ։

Ծառան անմիջապէս հեռացաւ, իսկ խանը տեղից կանգնելով ու

դնաց դէպի պալատի

մուտքը, որտեղից պէտք է ընդունէր հայ կրօնաւորին։

Սկսած այն օրից, երբ Մուստաֆա խանը իւր իշխանութիւնը ժառանգելով պապերից, վայելում էր ինքնակամ իշխանութիւնը ամբողջ Ճիրվանի գաւառում. այդ օրից սկսած նա մի առանձին խնամք էր տանում այն բոլոր հայերին, որոնք գտնւում էին նորա իշխանութեան ներքոյ. մանաւանդ դէպի հայ հոգեւորականներին, որոնց նա վերաբերւում էր ամենայն յարգանքով։

Միայն վերջին ժամանակներում, (1797 թուականին) երբ ռուսները տիրեցին կովկասը, այդ ժամանակ խանը իրան վիրաւորուած համարելով տեղացի հայերից սկսեց հալածել նրանց։

Մի քանի բոլէից յետոյ քահանան խանի հետ միասին գտնւում էին պարսկական ճաշակով զարդարուած շքեղ սենեակներից մէկում։

Սովորական հարց ու բարևից յետոյ, նրանք մի փոքր խօսակցեցին, և յետոյ վեր կացան դուրս եկան միասին պարտէզը փոքր ինչ շրջելու, ուստի մի քանի պտոյտներ անելուց յետոյ, նրանք նստեցին մի նստարանի վերայ, և դարձեալ սկսեցին խօսել զանազան հարցերի մասին, բայց այդ խօսակցութեան ժամանակ խանը նկատեց մի տխրութիւն, որ պատել էր քահանայի բարի դէմքին. նա պարզ նկատում էր, որ քահանային մի բան է պատահել անշուշտ, որ այդ պէս մռայլուած է նորա մշտազուարթ դէմքը։

Ուստի այդ պատճառով խանը խօսակցութիւն փոխելով դարձաւ քահանային։

— Հը, քէշիշ, ասա ինձ, ի՞նչ պէս է անցնում օրերդ, ինչ պէս ես, գոհ ես արդեօք վիճակից դ։

— Ինչու մեծաշնորհ խան, պատասխանեց քահանան, ապրումենք մի կերպ կռուելով կեանքի հետ։

— Չէ քէշիշ-այսօր դուք մի տեսակ այլայլուած էք երևում ինձ, կարծես մի ինչ որ փորձանք է պատահել ձեզ, ասա քէշիշ, ինչ է ձեր տխրութեան պատճառը։

Քահանան տեսաւ որ խանը արդէն նկատել է իւր տխրութիւնը, և թէ անկարելի է ճշմարտութիւնը թաղցնել և չասել նորան, ուստի ասաց։

— Ինչ ասեմ խան, վիճակիցս այն ժամանակ կարող էի գոհ լինել, եթէ քահանայ չլինէի,

— Քահանայի այդ խօսքերքի վերայ զարմացած խանը հարցրեց։

— Այդ ինչ էք ասում քէշիշ, միթէ քահանայութիւն անելով վատ է անցնում ձեզ համար։

— Ոչ մեծաշնորհ խան, պատասխանեց քահանան. քահանայութեան պաշտօնը վատ չէ երբէք, բայց որքան որ ծանր է, նոյնքան մեզ քահանաներիս համար սահմանուած օրէնքը շատ դժուար է, և ահա այդ դժուարութիւնների մէջ ընկնելով մենք շատ անգամ զրկւում ենք կեանքի անհրաժեշտ պահանջներից։

— Բայց ասա քէշիշ, կտրեց քահանայի խօսքը

խանը անհամբերութեամբ ինչ փորձանք է պատահել, ես պատրաստ եմ օգնելու ձեզ։

— Ճնորհակալ եմ խան, պատասխանեց քահանան, կրօնաւորին յատուկ համեստութեամբ, եթէ ես իմանայի խան, որ ինձ պատահած դժբախտութիւնը կը վերջանար ձեր օգնութեամբ, ես ինքս դիմելով ձեզ, կը խնդրէի ձերս մեծութիւնից։ Սակայն ներեցէք խան, որ ինձ պատահած դժբախտութեանը, ոչ մի հնարով չի կարելի վերջ տալ, հետևապէս ոչ մի անձնաւորութիւն չի կարող հանել ինձ այդ անել դրութիւնից, որին Աստուած արժանի է համարել ինձ, թշուառիս։

— Քէշիշ պարզ խօսիր, ասա եղելութիւնը—ինչ է պատահել ձեզ, հարցրեց անհամբերութեամբ խանը նորից։

— Այո՝ մեծաշնորհ խան, ցաւալի և կսկծալի է ինձ պատահած դժբախտութիւնը, շարունակեց քահանան։ Սորանից երկու շաբաթ առաջ վախճանուեց կինս, թողնելով չորս մանր երեխաներիս հետ ինձ դառն անբախտութեան մէջ։ Մտածում եմ արդեօք ինչ կը լինի իմ երեխաներիս դրութիւնը, երբ չը կայ այլևս նրանց խնամող մայրը, ով պիտի լինի նրանց միխիթարողը այսուհետև, կինս ջահել էր, նա հոգ էր տանում զաւակներին, սիրում էր նրանց մայրական լի անկեղծ սիրով, իսկ ես խան, անկարողեմ նրանց մօր նման խնամել ու պահպանել, ահա խան, իմ ամբողջ ներկաս, ուրեմն էլ ինչպէս չի

տխրէ ինձ նման մի քամբախտ, և թշուառ մարդը։

Քահանայի այդ բոլոր խօսքերը լսելուց յետոյ, խանը մի առանձին լրջութիւն ընդունելով իր դէմքի վրայ, ասաց։

— Մահը քէշիշ ամենքիս համար է, այդ մասին ցաւել կարծեմ այսուհետև աւելորդէ, բայց ինչ՝ու էք խզուր տեղից ձեզ թշուառ և քամբախտ անուանում, քանի որ դուք նորից կարող էք ամուսնանալ։

— Ահա հէնց դժբախտութիւնը դորանումն է խան, որ ես չեմ կարող ամուսնանալ։

— Ինչու, հարցրեց խանը զարմացած

— Որովհետև մեր օրէնքով արգելումէ քահանային երկրորդ անգամ ամուսնանալ։

— Բայց ասա քէշիշ, ինչ է պատճառը, որ օրէնքն արգելում է քահանաների երկրորդ ամուսնութիւնը, ասաց խանը հետաքրքրուած։

— Ես էլ չի գիտեմ խան, պատասխանեց քահանան տխրատէմ։ եթէ պարզ քննելու լինենք այդ օրէնքը, որով արգելում է մեզ քահանաներիս կրկնամուսնութիւնը, մենք կ՝տեսնենք որ այդ կանոնը մի խոշոր սխալ է մեր օրենքների մէջ, և հետևապէս դէմ է բարոյական սկզբունքներին։ Սակայն ինչ արած, որ ո՛չ մի ձեռք չի յանդգնում ջնջելու այդ սխալը, որ մեծամեծ չարքերներ է առաջացրել քահանաներիս կեանքի մէջ։

— Բայց դուք հասկանալով այդ սխալը, տանելով այդ անխեղճ կանոնը՝ այնուամենայնեւ հպատակւում

էր այդ օրէնքին, հարցրեց խանը աւելի տարացած։

— Սխալ թէ ուղիղ, խան, բայց պիտի լռել, քանի որ հազարաւոր տարիներից ի վեր օրէնքէ գրուած մեզ համար—պատասխանեց քահանան լրջութեամբ։

— Ինչպէս քէշիշ, ես ձեզ չեմ հասկանում, ասաց խանը։

— Այո՛ խան, այն ինչ որ օրէնք են գրուած մեզ համար մեր սուրբ նախահայրերից, գիտեցած եղէք, որ իրաւունք չունենք մենք սրբութեամբ չը կատարելու նորա ամեն մի ծէսը։

— Ուրեմն դուք չէք կարող նորից ամուսնանալ։

— Կարող եմ, եթէ թողնեմ քահանայական աստիճանս, պատասխանեց քահանան։

— Ոչ՝ երբէք քէշիշ,—բարձրաձայն բացականչեց խանը, դուք երբէք չէք թողնիլ ձեր պաշտօնը և ոչ էլ կ՚մնաք առանց ամուսնանալու, ես հէնց այս րոպէիս կասեմ ձեզ, որ դուք պիտի ամուսնանաք, մնալով ընդ միշտ ձեր պաշտօնի մէջ, և կը հրամայեմ որ ձեր հարսանեաց բոլոր ծախքը հոգան իմ գանձարանից։

— Ներեցէք խան, ասաց քահանան, ձեր գթած օգնութեան համար, սակայն պէտք ասեմ որ Ձերդ մեծութեանը կենաց համար երկար օրեր աղօթող հոգևորականս, անկարող է այդ քայլն անելու։

— Լաւ մտածիր քէշիշ. որ ձեզ հետ խօսում է

Ձիրվանի խանը, և այդ իմ ցանկութիւնն է պէտք կատարուի, ասաց խանը մի առանձին հպարտութեամբ։

— Անկարող եմ խան, պատասխանեց քահանան դրական կերպով։

— Մի շարժեք իմ բարկութիւնը, քէշիշ, ասաց խանը լրջօրէն, ես ձեզ համար բարիք եմ ցանկանում։

— Գիտեմ խան, բայց միթէ կարողէ լինձ պիսի մի քահանան ոտնակոխ անել օրէնքը։

— Բայց քէշիշ, չէ որ դա ապօրինի օրէնք է։

— Թէ կուզ խան, բայց մի թէ կարող եմ ես այդ քայլը անելով պատժուել և ընդ միշտ զրկուել պաշտօնից—պատասխանեց քահանան։

Մի թէ կարող եմ ես իմ այդ քայլովը բացառութիւն կազմել հոգևորականութիւնի մէջ և սև նախատինքով ծածկել իմ ճակատը յաւիտեան։

— Ոչ՝ խան ասացի որ անկարող եմ այդ քայլը անել։

Այո՛ որքան էլ սխալ լինի այդ կանոնը, սակայն ինչ պէս հոգևորական (քահանայ) ես չեմ կարող օրէնքը ոտնատակ տալ իմ սրբազան պարտականութիւնն ճշմարտութեամբ պահել այդ պատուիրանը։

Քահանայի այս վերջին խօսքերն աւելի յուզեցին դիւրագրգիռ խանի բարկութիւնը, նա տեսնում էր որ քահանան առանց մի որ և է պատճառի աշխատում է օրինակելի համարել օրէնքի այդ սխալ կանոնը, ուստի աւելի հետաքրքրուած ասաց։

— Քէշիշ դուք կարծեմ շատ լաւ էք հասկանում իմ միտքը, բայց տակաւին չէք կամենում համաձայնուել ինձ յետ, և չէք կամենում կատարած լինեմ իմ ցանկութիւնը, բայց ես ձեզ չեմ պախարակում ձեր պաշտած և սիրած օրէնքի համար, միայն ինձ անարդար է երևում ձեր օրէնքի այդ կանոնը, որով արգելւում է ձեր կրկնամուսնութիւնը, ուստի ես, ցանկանում եմ քէշիշ, որ դուք պարզապէս բացատրէք դորա պատճառը, թէ արդեօք ինչ հիման վրայ է արգելւում ձեր կրկնամուսնութիւնը, ես կը ցանկանայի իմանալ այդ։

— Մեծաշնորհ խան, ասաց քահանան—պարզ և արդարացի հայացքով նայենք մեր այդ կանոնին, կը տեսնենք որ իրաւ բարոյական տեսակէտից որքան անարդար բանէ կրկնամուսնութեան արգելքը մեզ քահանաներիս համար, բայց չէ որ ասացի, այն ինչ որ սահմանել և գրել են մեր նախահայրերն ու առաքեալներն, մենք իրաւունք չունենք չ'կատարելու նորանց պատուիրանքները։

— Բայց չէ որ քէշիշ, եթէ ձեր առաքեալները իրաւ որ գրած են սուրբ գրքի մէջ արգելք դնելով ձեր կրկնամուսնութեանը, անշուշտ բացատրութիւնն էլ տուած կը լինեն այդ մասին։

— Բացատրութիւն խան, այդ մասին երկար չի գրուած սուրբ գրքում։

— Ապա ինչ'չ է գրուած, հարցրեց խանը անհամբեր։

— Գրուածէ խան, որ քահանաները պիտի ունենան միմիայն մի կին։

— Ուրիշ ոչինչ և ոչ մի բացատրութիւն այդ մասին։

— Ոչ մի խօսք պատասխանեց քահանան։

Այս կարճ հարց ու պատասխանից, խանի համբերութիւնը հատաւ, և այդ աւելի շարժեց ինքնակամ խանի բարկութիւնը, քահանայի այդ խօսքերը լսելով, կարծես մի անհաշտ պատերազմ սկսուեց տեղի ունենալ նրա դիւրագրգիռ սրտում, նա հրամայողական ձևով դարձաւ ասելով քահանային։

— Ուրեմն եթէ այդ պէս է քէշիշ, ես ձեզ հրամայումեմ մինչև մի շաբաթ ամուսնանալ, այ'ո այդ իմ ցանկութիւնն է և ոչինչ չը պիտի արգելք հանդիսանայ իմ ցանկութեանը։

— Անկարող եմ խան, պատասխանեց քահանան։

— Բայց ես հրամայումեմ քէշիշ, մինթէ դուք կատակի տէր էք դնում իմ խօսքերը ասաց խանը, ուղղելով բարկացած հայացքը դէպի քահանան։

— Հրամայեցէք խան գլուխս կտրեն պատրաստեմ ձեր վճռին, սակայն այդ քայլն անել անկարող եմ։ Ոտնակոխ անել օրէնքը օ՝ ոչ խան, ես աւելի շուտ կընդունեմ մահը քան օրինազանց լինելը։

— Խանը տեսնելով հայ կրօնաւորի ունեցած անկեղծ սիրտը, երկաթէ կամքը, իւր օրէնքի մի սխալ կանոնի մասին, մնացել էր զարմացած, նա տեսնում էր, որ քահանան պարզ հասկանալով

սխալը դարձեալ չէ կամենում մոռանալ, չէ կամենում ճանաչել ճշմարտութիւնը, որով ինքը ստիպում էր նորան ամուսնանալ։ Թէև մի կողմից խանը տեսնումէր նրա հաստատակամութիւնը իւր օրէնքի վերաբերմամբ, բայց միւս կողմից պարզ ճշմարտութիւնը կռւում էր իւր սրտում և ստիպում էր գործ դնել ամէն միջոց հայ քահանայի կրկնամուսնութեան համար։

Քահանան պատրաստ էր զոհուելու քան այդ քայլը անելու։

Խանը մի փոքր մտածելուց յետոյ, երբ տեսաւ որ քահանան չէ կամենում ճանաչել ճշմարտութիւնը, չի կամենում ամուսնանալ, կամեցաւ պատժի ենթարկել նորան, եթէ չի կատարել իւր ցանկութիւնը, սակայն շուտ չը հրամայելով պատիժը, դառնալով ասաց։

— Ես գիտեմ քէշիշ, որ դուք էլ ցանկանում էք ամուսնանալ, միայն դուք վախենում էք ձեր վարդապետից, որ կըզրկէ ձեզ ձեր պաշտօնից, ինչ պէս ինքներտ էք ասում, բայց լաւ իմացէք քէշիշ որ դուք չէք զրկուիլ պաշտօնից։ Այո՛ ես հէնց այս երեկոյ մարդ կուղարկեմ վանքը, որպէսզի վաղը ինձ մօտ բարեհաճէ՝ հովհաննէս խալիֆան* և ես վաղը ձեր և իմ բոլոր բէգերի ներկայութեամբ կը խնդրեմ նորան, որպէս զի ձեզ իրաւունք տրուի

* Հոգեւորականը հովհաննէս վարդապետն էր, որ այդ ժամանակ վանահայր էր մուրբ Ստեփաննոսի վանքում, որը գտնւում է Ջամախու Սաղեան գիւղում։

երկրորդ անգամ ամուսնանալ։

Ինչ էք կարծում, քէշիշ, խալիֆան կը մերժի իմ խնդիրը։

— Ես կարծում եմ խան — պատասխանեց քահանան, որ խալիֆան որպէս օրինապահ կրօնաւոր, երբէք չի համաձանիլ այդ բանին։

— Բայց մենք կը փորձենք քէշիշ, կտրեց նորա խօսքը խանը։

— Ձեր կամքնէ, խան, պատասխանեց քահանան։

Այս խօսքերից յետոյ նորանք վեր կացան նստարանից և մի փոքր շրջելով պարտիզում, վերադարձան ապարանքը, որտեղ քահանան մի բաժակ թէյ խմելուց յետոյ, մաղթեց մեծաշնորհ խանին երկար կեանք և բախտաւորութիւն, ու վերադարձաւ քաղաք։

Բ.

Միւս օրը նախաճաշի ժամանակ, համաձայն ինքնակամ խանի հրամանին, Յովհաննէս հայր սուրբը ներկայացաւ։

Խանը ըստ սովորականի սիրալիր կերպով ընդունեց Յովհաննէս սրբազանին իր պալատում, և հրամայեց ծառաներին այդ օրուայ համար մեծ պատրաստութիւն տեսնել։

Այդ օրը բայի սրբազանից նա հրաւիրել էր տեղային բոլոր բէգերին իր մօտ. ինչպէս երևում էր խանի ծրագրից, նա վճռել էր բոլոր իր բար-

ձրաստիճան հիւրերի ներկայութեամբ երկու նշանաւոր փորձ անել։

Եւ իրաւ որ դա ճիշտ էր։ Ճիրվանի խանը այդ օրը խիստ վճիռ էր կայացրել երկու նշանաւոր մարդկանց համար, եթէ վերջիններս չի կատարէին նրա հրամանը։

Դորանցից մինը Յովհաննէս սրբազանն էր, իսկ միւսը իրանց հոգևորականութեան գլխաւոր Մուշտէիդը. սարսափելի և խիստ էր պատիժը։

Մուշտէիդը մեղադրւում էր չորս կին առնելու պատճառով։

Երկու օր առաջ Թրքաբնակ Ղաջար գիւղացի մի ծերունի մտաւ խանի դիւանատունը և դանդատուեց թէ մուշտէիդ մոլլա դաղին չը բաւականանալով իւր երեք կնիկներովը բռնի կերպով խլել էր նրա մի հատ տասնեօթ ամեայ գեղեցիկ աղջկան, և առանդելով, իր չորրորդ կինն էր դարձրել նորան, թէև ծերունին շատ աղաչանքով ընկել էր Մուշտէիդի ոտները, և խնդրել էր որ յետ դարձնէ իր աղջկան, սակայն Մուշտէիդը չը լսելով նրա աղաչանքը անէծքներ կարդալով թշուառ ծերունու գլխին, դուրս էր վանդել իր տանից,

Եւ ահա խանը լսելով ծերունու դանդատը սաստիկ զայրացաւ, անմիջապէս կանչել տուեց Մուշտէիդին իւր մօտ, որպէսզի բացատրութիւն պահանջէ նորանից իր գործած զզուելի յանցանքի համար։ Իսկ Յովհաննէս սրբազանին ընթերցողը

արդէն գիտէ, թէ ինչու համար էր հրաւիրել։ Ահա այդ երկու նշանաւոր մարդիկն էին խանի այդ օրուայ փորձի առարկաները, երկուսի արարքն էլ մի անասելի վրդովմունք էր պատճառել նորան։

Նա արդէն որոշել էր իր մէջ, թէ ինչ պատիժների պիտի ենթարկուեն այդ երկու հոգևորականները. Ուստի նա սկզբում դեռ հանդարտ էր, կարծում էր որ նրանք մի բոլշ չեն կարող ընդիմանալ իւր ցանկութիւններին, և իմանալով իրանց համար որոշուած խիստ պատիժները, իսկոյն կ՚կատարէին իր ցանկութիւնները։

Դէս օրից յետոյ երբ փառաւոր ճաշը վերջացաւ պալատում, խանը սկսեց նախ հարցու փորձ անել տեղական բէգերից, իրանց վիճակների և ժողովրդի դրութեան մասին, և ապա դարձաւ վերջապէս Սրբազանին,

— Իսկ դուք խալիֆայ գոհէք ձեր վիճակից։

— Քանի որ Ճիրվանը ունէ ձեզ պէս մեծաշնորհ տէր, ուրեմն մենք ձեր կենաց համար աղօթողներս միշտ գոհ ենք մեր վիճակից, պատասխանեց սրբազանը, կրօնաւորին յատուկ լրջութեամբ։

— Իսկ ես գոհ չեմ ձեզանից խալիֆայ՝ ասաց խանը, համարձակ աչքերով նայելով Սրբազանի երեսին։

Խանի վերջին բառը մի առանձին շփոթութեան մէջ ձգեց Սրբազանին, նա չգիտէր թէ ինչումն էր բանը։ . . .

Նա ընկաւ հաղար ու մի կասկածանքների մէջ։

Երբէք չէր պատահած, որ Ձիրվանի—խանը անգոհունակ լինէր հայ հոգևորականներից։

Այդ պատճառով նա երկմտած խանի խօսքերից պատասխանեց։

— Ձեմ կարծում մեծափառ խան, որ մենք մի որև վատ գործ կատարած լինենք դէպի ձեզ, որի մասին դուք անգոհանակ լինէիք մեզանից, և ինչու պէտքէ գոհ չլինիք մեզանից, քանի որ մեզ ճանանչած օրից մի որև է յանցանք չէք նկատել մեզանում, և կարծեմ խան ձեզ պարզ յայտնի է թէ մենք ինչպիսի հոգով ենք վերաբերւում դէպի ձեզ, և դէպի Ձիրվանի ամբողջ ազգաբնակութեանը, այն հաւատը, որը մենք ենք տածում դէպի ձեզ, և դէպի մեր ժողովուրդը, դորան վկայ է ամենաբարձրեալ Աստուածը։

— Այդ բոլորը շատ պարզ է խալիֆայ, պատասխանեց խանը, ես գիտեմ որ դուք սրբութեամբ էք կատարում ձեր պաշտօնը և միշտ բարիքն էք ցանկանում մեր երկրին, սակայն այդ չէ իմ դժգոհութեան պատճառը։

Ասա՛ խնդրեմ խալիֆայ, շարունակեց խանը— եթէ մի մարդ անյաջողութեան հանդիպելով դժբախտանում, է այդպիսի մարդուն, մարդկութիւնը և օրէնքը պաշտպանում են, թէ աւելի են թշուառացնում։

— Ինչ պէս խան, դժբախտութեան մէջ ընկած մարդուն պաշտպանումէ թէ օրէնքը և թէ մարդկու-

թիւնը, պատասխանեց սրբազանը, զարմացած խանի այդ օտարոտի խօսքերից։

— Ուրեմն խալիֆայ, համաձայնումէք ինձ հետ, որ դժբախտին օգնելը և պաշտպանելը մի սուրբ պարտականութիւն է, որը պատուիրում Աստուած, կրկնեց նորից խանը։

— Այո՝ խան, Աստուածութիւնը ասումէ սուրբ գրքի մէջ, օգնելով դժբախտներին, թշուառներին, իմացէք որ օգնում էք ինձ։

— Շատ բարի, ասաց խանը—բայց ինչու դուք չէք կատարում Աստուածային այդ սուրբ պատուիրանը։

Խանի այդ վերջին խօսքերը աւելի զարմացրեց Սրբազանին և վերաւորեց նրա ինքնասիրութիւնը, որովհետև սկսած այն օրից, երբ նա ստանձնել էր սուրբ վարդապետութեան պաշտօնը ամենայն սրբութեամբ և հաստատութեամբ էր վերաբերուել դէպի իւր սրբազան կոչումը, ոչ մի անգամ նա իր կեանքում մի անարդար գործ կատարած չէր, որպէս զի շարժէր Ձիրուանի խանի բարկութիւնը։

Բայց որքան մտածում էր, ոչ մի եզրակացութեան չէր հասնում խանի անգոհունակութեան մասին, ուստի նա շատերի նման սկզբում չփոթուեց, այլապէս չէր կարելի, հարկաւոր էր նրան անպատճառ իմանալ խանի՝ իրանից դժգոհ լինելու պաճառը։

Եւ նա արդար մարդու յատուկ հայեացքով դարձաւ խանին։

ՀՍՍՌ-Ական Գ.Գ.
Ա. ՀՄ Գ Մար
Ա. ՍՍՍՌ ԱՍ
БИБЛИОТЕКА
ИНСТИТУТА
ВОСТОКОВЕДЕНИЯ
60970-67

— Ես չեմ կարծում որ մի որև է յանցանք գործած լինելով շարժած լինեմ Ձիրվանի խանիդ բարկութիւնը, բայց այնուամենայնիւ գուցէ ձերդ իշխանութիւնդմի բան թէ լսել կամ իմացել էք մեզանից, թող շնորհէ մեզ և յայտնէ մեր մեղաւորութիւնն այդ մասին։

— Այս՛ խալիֆայ, պատասխանեց խանը, ես կասեմ ձեզ, որ դուք դժբախտացնումէք մի մարդու, որին արդէն դժբախտացրէլէ Աստուած և դժբախտացնելով նորան, սպանել էք կամենում նորա ամբողջ ընտանիքը և այդ բոլոր չարիքները դուք ծածկում էք օրէնքով, ասացէք խնդրեմ, միթէ ձեր ասելով ձեր սուրբ գրքի մէջ մէկ տեղ գրուածէ օգնել, պաշտպանել թշուառին, իսկ մի ուրիշ տեղ գրուած է հալածել, դժբախտացնել . . . ։

— Մեծաշնորհ խան, պատասխանեց սրբազանը համբերութիւնը հատած, որն է այդ մարդը, որին ես անբախտացրել եմ, արդեօք չէ՞ կարելի իմանալ նորա ով լինելը։

— Նա այնքան էլ կորած մարդ չէ խալիֆայ, կարծէմ դուք ինքներդ էլ գիտէք նորա ով լինելը, նա մեր քաղաքի քահանան է, որի կինը վախճանուելով դուք արգելում էք երկրորդ անգամ ամուսնանալու, ասա խալիֆայ, միթէ այդ յանցանք չէ ձեր կողմից։

— Բայց խան, միթէ դորանում ես մեղաւոր եմ կամ միթէ ես եմ արգելողը։

— Ապա ո՞վէ արգելողը։

Օրէնքը, պատասխանեց սրբազանը։

— Ասա խնդրեմ խալիֆայ, շարունակեց խանը— աւելի տաքացած եղանակով —ինչ հիման վրայ է արգելում ձեր օրէնքը քահանայի կրկնամուսնութիւնը, չէ՞ որ դուք փոքր առաջ ասացիք, թէ Աստուածութիւնը սուրբ գրքի մէջ պատուիրումէ, օգնել կարօտեալ թշուառին, իսկ այժմ ասում էք օրէնքն է արգելողը. ասա՛ խնդրեմ, միթէ դա արդար օրէնքէ, էլ դորանից աւել թշուառ գրութեան մէջ մարդ կարողէ լինել, արդեօք ո՞ր գրքի մէջ է գրուած այդ տեսակ անմեղ բան, ինչո՞ւ չ՚պէտքէ ամուսնանայ մի քահանայ երկրորդ անգամ, քանիսը նորա որբ մնացած մանր երեխայքը գտնուումեն անխնամ գրութեան մէջ, ասա՛ խալիֆայ դուք զգումէք, թէ ինչ է նշանակում մայր։—Գաղաններն անգամ առանց մօր անկարող են լինում խնամուել, բայց դուք կարծես ոչնչի տեղ էք դնում այդ բանն առանց մտնելու դժբախտ քահանայի գրութեան, մէջ պնդում էք ձեր օրէնքի այդ սխալ կէտի վրայ։

Եւ վերջապէս խալիֆայ ես կը խնդրէի բացատրել ինձ, թէ ինչ հիման վրայէ արգելում օրէնքը քահանայի կրկնամուսնութիւնը։

Սրբազանը որ այդ բոլոր ժամանակ լուռ ականջ էր դնում խանին, շուարել էր, նամնացել էր տատանման մէջ, ինչո՞ւ է արդեօք խանը միջամտում այդ տեսակ հարցերի մէջ մտածում էր նա.—միթէ հայ քահանան

ինքնէ դիմել խանին, որպէս զի նա մի կողմ շպրտէ այդ օրէնքը, և իրաւունք տայ իրան կրկին անգամ ամուսնանալու։

Այժմ ինչ պատասխանէր նա այդ ինքնակամ խանին, և այն էլ ինչ ձևով, քանի որ խանը չէր զլխանելու իր ասածից և կամենում էր միանգամայն վերացնել հայերի միջից այդ կանոնը—խանը բացատրութեան էր սպասում։

Սրբազանը մի քանի բոպէ տատանուելուց յետոյ վերջապէս դարձաւ դէպի խանը։

— Գիտէք, մեծավառ խան, ասաց նա—ինչպէս իւրաքանչիւր մի ազգ ունի օրէնք իւր համար և նա պաշտում է իւր օրէնքը բոլոր սրբութեամբը կատարում է նորա բոլոր ծէսերը և կանոնները իւր բոլոր ճշտութեամբ, նոյպէս և մենք հայերս, խան, ինչպէս վազեմի հին ազգ, ունինք մեր օրէնքը, մենք ևս պարտաւոր ենք ամենայն սրբութեամբ և ճշտութեամբ պահել նորա ամեն մի պատուիրանը։

Հետևապէս ո՛չ մի ձեռք, ոչ՛ մի մարդ, ոչ մի լեզու հազարաւոր տարիներ անկարող են եղել խախտել մեր օրէնքի ո՛րև է ծէսը, նոյնպէս այժմ և սրանից յետ, ո՛չ մի ձեռք չի կարող քանդել մեր նուիրագործուած օրէնքը կամ նորա մի որ և է կէտը։

Դուք ճշմարիտ է, սխալ էք համարում քահանայի կրկնամուսնութեան արգելքը, սակայն իմացէք խան, որ մենք, որպէս օրինապահ կրօնաւորներ, իրաւունք չունենք ջնջելու այդ արգելքը, որը գոյ-

ութիւն ունէ մեր մէջ հարիւրաւոր տարիներից ՝ի վեր։

— Զարմանում եմ խալիֆայ, պատասխանեց խանը աւելի յուզուելով, որ արևի նման պարզ ճշմարտութիւնը դուք ծածկել էք կամենում. դուք տեսնում էք և հասկանում, որ այդ ամենը սխալ է, սակայն կրկին պնդում էք հարիւրաւոր տարիները պատճառաբանելով։ Ասա խնդրեմ խալիֆայ, ով է մեղաւորը, որ հարիւրաւոր տարիներ դուք այդ անիմաստ կանոնը իւր այլանդակութեամբ պահպանել էք ձեր մէջ որպէս մի անջնջելի աւանդ և դեռ դուք պարծենում էլ էք, որ երկար տարիներ շարունակել է ձեր մէջ այդ սխալ կանոնը։

Սրբազանն այլևս խօսք չունէր պատասխանելու խանին։

Նա տեսաւ որ խանը խիստ է վերաբերում հայոց կրօնին և նորա ծէսերին, էլ չըկամեցաւ երկար ու բարակ բացատրութիւններ տալ նորան, քանի որ նա հպարտ և ինքնահաճ էր և իր ցանկութիւնն էր ուզում գլուխ բերել, բացի դորանից տեսնելով որ շուրջը գտնուող բոլոր բէկերը ինչ նենգամիտ հայեացք են ձգել նորա վրայ, բաւուր համարեց լռել, քանիմէ բացատրել հայի կրօնը նրանց առջև։

Բայց ինքնակամ խանն այդ հասկացաւ և դառնալով ասաց։

— Այդ բոլորը մի կողմ թողնենք խալիֆայ, այժմ ես ձեզնից խնդրում եմ որ իրաւունք տայիք քահանային երկրորդ անգամ ամուսնանալը

— Անկարող եմ խան, պատասխանեց սրբազանը լրջօրէն, անկարելիէ՝ ես այդ անել չե՛մ կարող։

— Եթէ մի բան խնդրումէ Զիրվանի խանը, երբէ՛ք անկարելի չէ կարող լինել

Պատասխանելով խանը, դարձաւ տեղային քահանային, որ ներկայ էր այդտեղ, և ասաց.—«խալիֆան իրաւունք է տալիս ձեզ ամուսնանալու. Դուք կարող էք վաղուանից ձեր պատրաստութիւնը տեսնել, հարսանիքի բոլոր ծախքը կստանաք իմ գանձարանից. գնացէք քէշիշ աղօթեցէք իմ և խալիֆայի կենաց համար, որ ստացաք դուք այդ իրաւունքը։

Խանի այդ խօսքերի վրայ սրբազանը իւր բարկացկոտ հայեացքը ուղղեց քահանային և ասաց։

— Թողէ՛ք ձեր պաշտօնը և ամուսնացէք, եթէ կամենում էք, այլապէս ձեզ ոչ մի կերպ իրաւունք չէ տալիս օրէնքը, մինթէ դուք կամենում էք ոտնատակ տալ հայի օրէնքը։

Անճարացած քահանան ոչ մի պատասխան չունէր տալու սրբազանին։ Նա մնացել էր տատանման մէջ, տեսնում էր, որ այդ մասին խօսակցութիւնն աւելի վատ հետևանքի պէտք է հանէ, դարձաւ խանին և սրբազանին։

— Եթէ ձեր վիճաբանութիւնը իմ մասին է, ես կը խնդրէի Զիրվանի մեծափառ խանին և մեր սրբազան հօրը, որ ես չեմ ցանկանում ամուսնանալ այո՛ չեմ ցանկանում քանդել մեր օրէնքը և չեմ ուզում ամբողջ ազգիս անէծքը թափուի գլխիս։

— Իսկ եթէ իրաւունք է դրում ձեզ, պիտի ամուսնանաք, այո՝ այդ իմ ցանկութիւնն է, որ պիտի կատարուի,—ասաց խանը հպարտօրէն դառնալով սրբազանին։

— Խալիֆա, ես վերջին անգամ խնդրում եմ ձեզ, որ այժմ և եթէ իրաւունք տաք քէշիշին, որպէսզի նա սկսի վաղուանից հարսանիքի պատրաստութիւն տեսնել։

— Անկարելի՛ է խան, համոզուած կերպով ասաց սրբազանը, երբէ՛ք չի կարելի այդ տեսակ բացառութիւն անել մեր օրէնքի մէջ։

— Ուրեմն թոյլ տուէք խալիֆայ ասել, որ խնդրելուց յետոյ կայ մի ուրիշ խօսք և այդ հրամայելն է, այո՛ ես այս բոլորից յետոյ, երբ իզուր է անցնում եմ խնդիրքս, ստիպուած եմ միայն հրամայել,—ուրեմն հրամայում եմ խալիֆայ՝ տալ իրաւունք այդ թշուառ քահանային երկրորդ անգամ ամուսնանալու։

Խստահրաման խանի այդ վերջին խօսքերը սրբազանին անասելի շփոթութիւն պատճառեցին, բայց վերջինս ժողովելով իւր ուժը, հաստատակամութեամբ պատասխանեց։

— Անկարող եմ խան ձեր հրամանը կատարելու։

Սրբազանի դրական պատասխանը վերաւորեցին բարասիրտ խանի ինքնասերութիւնը. Նա բարկա-

նալով խսկոյն հրամայեց ներկայ գտնուող բէկերին, որ խսկոյն և ետ դուրս տանեն սրբազանին բակը և հրամայեն ծառաներին ընդարձակ բակի մէջ ֆալախկան պատրաստեն։

Աւելորդ է ասել, որ խանի հրամանը մի քանի րոպէում կատարուեց. Բէկերը սրբազանին տարան դուրս և յանձնելով ծառաներին, պատուիրեցին խանի հրամանը։

Քահանան մնացել էր խանի մօտ, ոտից գլուխ դողդողալիս. Նա տեսնելով խանի որոշած սարսափելի պատիժը, խնդրում էր, որ թողնէ այդ բոլորը, քանի որ ինքն չի կամենում այլևս ամուսնանալ։

Իսկ խանը հրամայեց որ քահանային ևս դուրս տանեն և այդտեղ պահեն։

Պատարուեց խանի այդ հրամանները։

Գ.

Այժմ ապարանքում մնացին խանը և իր բէկերը, Նա կանչել տուեց իրան մօտ պարսիկների մուշտէիդին, որ մի ժամ առաջ դուրս էր գնացել նամազ անելու։

Պատշգամբից ներս մտնելով, ողջունեց խանին, մօտեցաւ բազմեց իւր փառաւոր տեղում. Խանը, յուզուած սիրտը հովացնելու համար մի ղեյլան պահանջելով, նրա դէմ առ դէմ։

Այժմ խալիֆայի դարդը վերջացաւ աղա, մնում է ձերը, ասաց խանը, նայելով ուղղակի մուշտէիդի մռայլուած դէմքին։

— Ես չեմ կարծում խան, մի որ-և է յանցանք գործած լինեմ իմ կեանքում և դրանով բարկութիւն պատճառած լինեմ ձեզ։

Ո՛չ աղա, սխալւում էր դուք, այս՝ շատ սխալւում որովհետև այն անարդար յանցանքը, որ դուք էր գործել, ոչ մի անուն չի կարելի տալ։

Մոլեռանդ կրոնաւորը խանի այդ խօսքերից սաստիկ վիրաւորուած, պատասխանեց։

— Դուք ծիծաղում էք մեզ վրայ, թէ կարակներ անում։

— Ոչ՝ աղա, ասացի որ սխալւում էք. միթէ կարելի է ամենամեծ մարդարէի առաջնորդի հետ ծաղրով կամ կատակով խօսել. եթէ ես ծաղր կամ կատակ ցանկանամ, խսկոյն կը հրամայեմ իմ դէլիներին, որոնք իրանց կատակներով, մի առանձին հաճոյք են պատճառում ինձ, իսկ ձեզ հետ աղա, օ՜ Աստուած ոչանէ, միայն լուրջ եմ խօսում, Այն դուք այդ ձեր կոչման մէջ կատարել էք մի արատաւոր բան, որին ոչ մի կերպ անուն չի գտնւում տալու,

— Ասացէք խան, ինչ ենք արել—անհամբեր հարցրեց մուշտէիդը, մրմնջալով քթի տակ սովորական նամազը։

— Ահա թէ ինչ էք արել, պատասխանեց խանը

շարունակելով.— ասացէք խնդրեմ, միթէ դուք չ՝բաւականացաք ձեր ունեցած երեք կիներովը, որ յափշտակել էք Ղաջար դիւղացի այն ծերունու աղջիկը. ասա՛ ապա, միթէ մեր զուռանը այդ տեսակ բարբարոսութիւն է պատուիրում, որ դուք էք կատարում. ասենք թէ Մահմեդը սահմանել և իրաւունք է տուել մինչև եօթ կին առնելը, բայց ո՞ւր մնաց մարդկային աղնուութիւնը և խիղճը. միթէ կարելի բան է, ունենալ երեք կին և նորից վերցնել մի մանկահասակ, անմեղ աղջիկ, խախտել նորա կուսութիւնը ձեր կրքերին, և այդ էլ անուամբ մի մարդ, որ կոչւում է մահմեդի յաջորդը և ամբողջ մուսուլմանների գլխաւոր կրօնապետը. ասա՛ միթէ այդ զարհուրելի յանցանքին անուն տալ կարելի է։

— Խա՛ն այդ է ձեր անուանուած յանցանքը. բայց ասա՛ միթէ դա օրէնքից դուրս բան է, որ դուք առանց տեղեակ լինելու, այդ տեսակ անվայել կերպով էք խօսում կրօնապետիս հետ։

— Որքան անվայել, նոյնքան անարդար և մանաւանդ անհերելի ձեզ կրօնաւորիդ։ Ես հրամայում եմ ձեզ, այսօրուանից և ետ արձակէք ձեր կանանցից երեքին և բաւականանաք մէկով, գոնէ երկուսով, ասա՛ խնդրեմ, ինչով զանազանուի մարդս գազաններից։

Արձակեցէք այն թշուառ ծերունու աղջիկան. մեղք է նա. հայրը երէկ զանգատի էր եկել ինձ մօտ և ես խոստացայ, որ նրա աղջիկը երեք օրից՝ յետ կը դարձնուի իրան,

Մուշտէիդն լսելով այդ ամենը, սաստիկ զայրացաւ բոլոր այդ տեղի ունեցած անախորժ խօսակցութեան և խանի վրայ մանաւանդ, որ իւրան հասարակ մարդու տեղ դնելով էր վարւում և բացի դրանից հրամայում է թողնել իւր կնիկներին, բայց այդ մահու չափ ծանր էր նորա համար և երբէք իրաւունքից զուրկ չէր ուզում համարել իւր արած քայլի մէջ, նա գիտէր որ ինքը ինչպէս կրօնապետ ամբողջ Շիրվանի, և իրաւունք ունի ամեն ինչ անելու, այն մինչև անգամ օրէնքով խանից բարձր իրաւունք էր վայելում մահմեդականների մէջ։

Բայց խանը չէր ուզում հետեւել իւր նախորդների օրինակին, որոնք այնքան ազատ էին թողել կրօնաւորներին իրանց օրերով. նա արդարադատ և մաքուր խղճի տէր լինելով, միշտ պաշտպանելով աղնուութիւնը, չէր կարողանում տանել իրանց կրօնաւորների բարբարոսութիւնը։

Նա տեսնում էր, որ իր պապերը այնքան լայն ու բարձր իրաւունքներ էին տուել իւրտրանչիւր կրօնաւորին, որ նրանք ազէտ ժողովրդին գերի էին դարձրել իւրանց ձեռքում, որքան էլ անարդար լինէին նրանք իւրեանց իւրաքանչիւր քայլի մէջ, այնուամենայնիւ ոչ մի մարդ չէր համարձակւում մինչև անգամ վատ հայեացքով նայել մօլլայի կամ մուշտէիդի երեսին, օրէնքը, մուշտէիդի ասելով, անէծք է թափում նորա գլխին, ովոր կընդդիմանայ մեծ կրօնապետին, ապա ուրեմն և մեծ մարդարէին։

Բայց Մուստաֆա խանը շատ լաւ գիտէր, որ մեծ մարգարէի անուան տակ ծածկուած մոլեռանդ, բարբարոս կրօնաւորների կատարած զազրելի գործերը, նա գիտէր որ այդ սուտ ճգնաւորները իրանց այդ կեղտոտ կեանքով թող են փչում միամիտ մուսուլմանների աչքերին, որոնք սրբի տեղ ընդունելով նորանց, պաշտում են ամենքը։

Ահա այդ պատճառով հրամայում էր թողնել Ղաջար գիւղացի ծերունու աղջիկան, որի հայրը երեք օր առաջ ողբալով գանգատուելու էր եկել խանին։

Բայց մուշտէիդը կարծելով որ խանը երբէք չի կարող միջամտել իւր գործում, իրան բարձր գերա դասելով խանից, դորա համար էլ պատասխանեց։

— Խան, միթէ դուք չէք ուզում ճանաչել կրօնաւորներիս պատիւը և միթէ չգիտէք Ալլահի և Մահմէդի հրամանով ամենքը պիտի պատուեն և խոնարհուեն իմ առաջ։

Ձեզ յայտնի է կարծեմ խան, որ ոչ ոք իրաւունք չ'պէտքէ ունենայ իմ գործերում միջամտելու և խօսելու նա, ով պաշտում է և պահում Մահմեդի սուրբ օրէնքը։

— Եթէ Ալլահը և մեծ Մահմեդը օրենք են դրել, որ մենք պատուենք և պաշտենք ձեզ պէս սուտ ու խաբեբայ բարբարոս կրօնաւորներին, ես իրաւունք եմ համարում ինձ ընդ միշտ ջնջելու այդ օրէնքը. այո, ես այդ պէս եմ յանկանում և պէտք է լինի

իմ ասածը. կրկին հրամայում եմ ձեզ, որ այս ըստ էիս ձեր իրաւունքով արձակել տաք ձեր կանանցից երկուսին և այն ծերունու անմեղ աղջիկան, բաւականանալով մէկով։

— Խան ասացի որ դուք չըպիտի միջամտէք իմ գործում. այո խան, դուք օրէնքով իրաւունք չունէք։

— Ես ջնջում եմ այդ օրէնքը և հրամայում ձեզ, հասկանում էք,—ասաց խանը բարկացած։

— Դուք իրաւունք չունէք խան, պատասխանեց մուշտէիդը դրականապէս։

— Ես չունեմ իրաւունք, ասաց խանը և տեղից կանգնելով հրամայեց բէկերին, որ խսկոյն դուրս տանեն մուշտէիդին պալատից։

Բէկերը, որ հլու ծառաների նման լուռ ականջ էին դնում խանին, խսկոյն կատարեցին նորա հրամանը։

— Տարէք դուրս այդ սուտ ճգնաւորին, որ այդպէս օրէնքով է ուզում վախեցնել ինձ, ես այսօր ցոյց կըտամ նորան իւր օրէնքը և իւր յանդուգն պատասխանը ինձ. տեսնում էք բէկեր, որպիսի մարդիկ են դուրս կանգնում մեր ազգի վրայ. այդպիսի եղիդները իրանց արդարատատ կրօնապետ են անուանում, բայց միթէ դորանք կրօնապետներ են, միթէ դա մահմեդի յաջորդնէ. Դուք լսո լսեցիք նորա բոլոր պատասխանները, արդեօք ինչով է պակաս նա այն սրիկայ աւազակներից, որոնք լոյս ցերեկով են կողոպտում խաղաղ ժողովրդին։

Հասկացաւ այդ մարդը իւր պատիւը, իր կոչ-

ման արժէքը, ուրեմն նայեցէք հիմայ իմ դատարանին. տեսէք ինչպէս եմ դատում այս օր այդ երկու ազգի կրօնապետներին իրանց անարդար օրէնքների համար։

Դ.

Մեծ ընդարձակ բակի մէջ արդէն պատրաստած էին երկու ֆալախկաներ, մէկը Հովհաննէս հայր սուրբի համար, միւսը մեծ մուշտէիդ մոլլա դաղու համար։

Խանը բոլոր բէկերի հետ դուրս գալով իր երկհարկանի պատշգամբը, հրամայեց այնտեղից, որ առաջ հայ հոգևորականին կապեն ֆալախկայի. կատարուեց խանի հրամանը։

Սրբազանը լուռ էր, նա գիտէր որ ոչ մի խօսք այլ ես չէր օգնիլ նորան, ուստի լուռ տանում էր այդ սարսափելի պատիժը, մի քանի բոպէից արդէն սրբազանին մէջքի վրայ պառկացրած ձեռքերը յետևին կապած, ոտքերը դէպի վեր ֆալախկայի մէջ պնդացրած. էին, երբ խանը ձայն տուեց պատշգամբից։

— Լսեցէք խալիֆայ վերջին անգամ հրամայում եմ ձեզ, տալիս էք արդեօք իրաւունք քահանային ամուսնանալու, թէ ոչ։

— Երբէք, պատասխանեց վճռողական ձևով սրբազանը։

— Ուրեմն զարկեցէք նորան նախ քսան և հինգ ճիպոտ,—հրամայեց խանը։

Ֆալախկայի մօտ կանգնած չորս ֆարրաշները անմիջապէս սկսեցին կատարել խանի հրամանը։

Մի քանի վայրկեանից զարկը վերջացաւ, խանը ֆարրաշներին ձեռքով նշան արաւ սպասեն և դարձաւ սրբազանին ասելով։

Ասացէք խալիֆայ, տալիս էք իրաւունք քահանային ամուսնանալու, թէ ոչ։

— Ո՛չ եղաւ պատասխան։

— Զարկեցէք յիսուն ճիպոտ, ասաց բարկացած խանը, երևի նա ցանկանում է վերջ տալ իր կեանքին։

Ֆարրաշները նորից սկսեցին իրանց գործը. սարսափելի ծանր, մահացու հարուածների տակ գոռում էր սրբազանը. և ինչու համար՝ իր հաւատի, իր սուրբ օրէնքի պաշտպանութեանը համար, բայց մի՞թէ նա արժանի էր մի այդպիսի պատժի։

Տարակոյս չը կայ, որ յիսուն ճիպոտ խփելուց յետոյ սրբազանը արդէն անշնչացած էր։

Խանը տեսնելով հայ կրօնաւորի երկաթէ կամքը և իր օրէնքի համար զոհուելու ցանկութիւնը, մնացել էր զարմացած նա հրամայեց, ասելով քահանային։

— Ուրեմն տեսաք քեշիշ, որ խալիֆային մինչև անգամ ձեր պատճառով ես սպանել տուի ուրեմն այժմ գնացէք ազատ կերպով ամուսնացէք, խմացած

եղէք, որ Մուստաֆա խանի ցանկութիւններին և հրամաններին ընդդիմացողը միշտ այդ պէս է դատւում և այդպէս է պատժւում։

Այդ խօսքերից յետոյ քահանայի դրութիւնն անտանելի էր, նա տեսաւ որ իւր պատճառով ոպանել տուեց սրբազանին, գիտէր որ այնուհետ բոլոր տեղացի հայ ժողովուրդը անէծք պիտի թափէ նրա գլխին և ով գիտէ մի օր կսպանեն նորան, դարձաւ ասելով խանին։

— Մեծափառ խան, իզուր էր ձեր այդ արիւնալի գործը այն, ես ձեզ ասացի որ ես չեմ ցանկանում ամուսնանալ։

— Դուք այժմ էլ չէ՞ք ցանկանում ամուսնանալ, կտրեց նրա խօսքը խանը բարկացած։

— Ո՛չ, ասաց քահանան։

— Շատ բարի, պատասխանեց խանը և խոկոյն հրամայեց ֆարրաշներին, որ քահանային ևս կապեն ֆալախկի, քանի որ այդ մարդը չի ուզում հասկանալ իւր բարիքն ուրեմն զարկեցէք սրան յիսուն ճիպոտ. թող սա էլ իւր մեծի մօտ գնայ. երևի հոգևորականները նահատակութեան մէջ մի առանձին հաճոյք են վայելում։

Մի քանի րոպէում կատարուեց խանի հրամանը, բայց երբ ֆարրաշները սկսեցին իւրանց հարուածները, մի քանի հարուածից յետոյ խանը գործողութիւնն ընդհատելով հարցրեց։

— Քէշիշ, չէ՞ք ցանկանում ամուսնանալ։

— Ո՛չ պատասխանեց քահանան կիսաշունչ ձայնով։

— Ուրեմն զարկեցէք հրամայեց խանը, մի քանի րոպէից քահանան նոյնպէս անշնչացած էր։

Թէ խանը, թէ բէկերը մնացել էին զարմացած, տեսնելով հայ կրօնաւորների իրանց հաւատի մէջ ունեցած սիրոյ տենչը։

— Այժմ առաջ բերէք երրոդ հոգևորականին. ես գիտեմ այս օր երեք հոգևորական միասին են ցանկանում գերեզման գնալ։

— Այժմ ազա, դառնալով խան, մուշտէիդին դուք տեսաք խօսմ այդ երկու հոգևորականի իմ տուած պատիժը. . . ուրեմն աւելորդ է ասելը, որ դուք էլ նոյնպէսի պատժին պիտի ենթարկուէք, եթէ չէք կատարել իմ հրամանը. այս րոպէիս ձեր հրամանով եթէ մարդ չէք ուղարկիլ այն ծերունու աղջկան արձակելու. . .

— Հոգևորականները պատրաստ են ուրտխութեամբ տանելու ամեն պատիժ, ամեն զոհաբերութիւն, միայն թէ իրանց հաւատը ու օրէնքը չեն կարող ոտնակոխ անել, դուք խօսմ այս րոպէիս փորձիցիք և տեսաք հոգևորականի երկաթէ կամքը, ուրեմն թոյլ տուէք ասելու խան, որ ես էլ նոյնպէս կըզոհուեմ, սակայն չեմ կարող քանդել այն, ինչ որ մեզ համար օրէնքն է դրած, պատասխանեց մուշտէիդը լրջօրէն։

— Բայց ես վերջին անգամ ասում եմ այս բոլոր բէկերի ներկայութեամբ։ եթէ մեր դուրանում գրած է, որ մենք երեք--չորս կին առնենք, ես չեմ

հաւատում այդ զուրանին, իմ տերապետութեան տակ գտնուողները չըպէտք է կատարեն այդ օրէնքը։

— Անկարելի է խան, օրէնքն օրէնք է և պիտի կատարեն, ովքեր Մահմեդի դէնն են պաշտում, ո՛չ չոր չի կարող ընդեմանալ այդ օրէնքին, ասաց մուշտէիդը։

— Քանի որ դուք չէք ուզում լսել իմ խօսքերը և չէք ուզում կատարել հրամանս, ուրեմն պատրաստուեցէք տանել պատիժը,—ասաց խանը և հրամայեց ֆալախկայի կապել մուշտէիդին։

Միքանի րոպէից պատրաստ էր ամեն ինչ երբ խանը հրամայեց.—զարկեցէք առաջի անգամը քսան և հինգ ճիպոտ։ Նա կարծում էր, որ ցաւը անմիջապէս պէտք է կատարել տայ իւր հրամանը։

Ֆարրաշները կատաղի կերպով սկսեցին իրաց ահարկու հարուածները։

Երբ քսան և հինգ հարուածը լրացաւ հարցրեց խանը։

— Ինչպէս՝ էք ապա, համաձա՞յն էք խնդիրս կատարելու թէ ոչ։

— Ո՛չ,—հաղիւ լսելի ձայնով ասաց մուշտէիդը։

Բայց խանը այդ „ոչ“ը արտասանելու մէջ նկատեց, որ շուտով նա պէտք է համաձայնուի. երևի նա կարծում էր, որ խանը սպանելով երկու կրօնաւորներին, իւրան քսան և հինգ հարուածից յետոյ ներումն կըշնորհէ, բայց հակառակ նորա սպասածին, խանը հրամայեց նորից զարկել յիսուն պոտ. սակայն երբ ֆարրաշները սկսեցին սարսափելի կերպով հարուածներ իջեցնել Մահմեդի յաջորդի վրայ, նա այլևս անկարող եղաւ ցաւին դիմանալ, և դէռ հաղիւ էին զարկել տասը ճիպոտ, մուշտէիդը գոռալով ասաց „մի սպանէք ինձ խան, ես կ՚կատարեմ ձեր հրամանը։“

Խանը նշան արաւ ֆարաշներին որ դադարցնեն հարուածները։

— Համաձայնումէք արձակել ձեր կանանց.

— Այո ձերդ մեծութիւն,—պատասխանեց կիսաշունչ ձայնով մուշտէիդը։

— Ուրեմն այլևս օրէնք չէք համարում չորս կին ունենալ։

— Ո՛չ խան, քեզ զուրան օրէնքն էլ դուք էք, մեծ մարգարէն էլ և հրամայողն էլ այս րոպէիս կարձակեմ իմ բոլոր կանանց միայն թէ միք սպանել թշուառիս։

— Ահա թէ ինչ է նշանակում մահմեդականութիւնը և քրիստոնէութիւնը, տեսնում էք բէկեր մեր մուշտէիդի ունեցած կամքն իւր հաւատի վերաբերմամբ, և հայ հոգևորականներին իրանց նկատմամբ։

. . . . . .

. . . . . .

վերջ։

ԼՈՅՍ ԵՆ ՏԵՍԵԼ

1) Ներքնապէտ Ասլան . սպառուած. . 10 կ.
2) Տանուտէր Օհանը . սպառուած. . 15 „
3) Թշուառ Սօնան . սպառուած. . 20 „
4) Զիրվանի խանը . „ . 10 „

Շուտով լոյս կը տեսնի

Տանուտէր Օհանի II տպագրութիւնը.

Հասցեն՝ Саркису Паньянцу

Баку. Николаевская ул.,

Գումարով գնողներին զիճում կը լինի։

ՀՀ Ազգային գրադարան
NL0323756

22640

Comm
985

1
1

9/[illegible] 10 4.

Oi